ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

vanik.asatryan@parliament.am

Հետք պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյանին

ՀՀ ԱԺ պատգամավոր Վանիկ Ասատրյանից

Հարգելի տիկին Ղուկասյան

Ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում եմ, որ ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում ունեցել եմ բազմաթիվ հանդիպումներ քաղաքացիների հետ (եթե արտահայտենք թվային վիճակագրությամբ, ապա ընդունել եմ մոտ 100 քաղաքացի): Ցանկանում եմ տեղեկացնել, որ իմ աշխատանքի մեջ որդեգրել եմ հնարավորինս բաց ու ազատ աշխատելաոճը իմ տարածքի բնակչության հետ, ուստի, ելնելով վերոգրյալից, իմ հանդիպումները չի սահմանափակվում ամսվա մեջ մի քանի օրով, այլ հակարակը շփումս քաղաքացիների հետ կրում է ամենօրյա բնույթ: Ինձ դիմում են բազմապիսի խնդրանքներով, որոնցից ամենաթիրախայինը մարդկանց ծանր սոցիալական պայմաններն են, աշխատատեղերի բացակայությունը և ինչպես գիտեք ես ներկայացնում եմ Լոռու մարզը, մասնավորապես Սպիտակ քաղաքը, բնակարաններով ապահովման խնդիրը: Չնայած պատգամավորի լիազորությունների մեջ չի մտնում մարդկանց սոցիալապես աջակցելը, բայց իմ հնարավորության սահմաններում փորձում եմ անել հնարավոր ամեն ինչ՝ գոնե չնչին չափով փորձելով թեթևացնել իմ համաքաղաքացիների հոգսերը:

Ինչ վերաբերվում է Սպիտակում աղետի հետևանքները վերացնելուն ուղված աշխատանքներին, ես երկու անգամ բարձրացրել եմ այս հույժ կարևոր խնդիրը Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 120-րդ հոդվածով նախատեսված ԱԺ-Կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ. Մեկ անգամ հարցադրումս ներկայացրել եմ նաև գրավոր տեսքով, ստացել եմ գրավոր պատասխան, այժմ ձեռնարկած աշխատանքները շարունակական փուլում են գտնվում:

Մեկ անգամ նաև հադես եմ եկել հայտարարությամբ ինձ դիմած Վանաձոր քաղաքի քաղաքացիների դիմումի հիման վրա:

Ինչպես գիտեք ես հանդիսանում եմ պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, ակտիվ մասնակցություն եմ ունենում հանձնաժողովի աշխատանքներին, քննարկումների, սակայն դեռևս հանդես չեմ եկել օրենսդրական նախաձեռնությամբ: